ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

7000-1800թթ. (ն.Ք.)	Միջագետք/ Շումեր	Մոտ 7000թ. (ն.Ք). մարդիկ այս տարածաշրջանում սկսեցին վերափոխել շրջակա միջավայրը: Գյուղատնտեսական նպատակով իրականացվող ինտենսիվ ոռոգման հետևանքով տեղի ունեցավ հողերի աղակալում և ճահճացում: «Հողը սպիտակեց աղից» արտահայտությունը սկիզբ է առել հենց այդ երևույթից: Մոտ 2000թ. (ն.Ք.) գյուղատնտեսության համակարգը, որը երկրի հիմքն էր, քայքայվեց:
2600թ. (ն.Ք.) –առ այսօր	Լիբանան	Անցյալում Լիբանանի սարերը ծածկված էին բացառիկ գեղեցկությամբ և հզորությամբ հայտնի մայրուտներով: Սողոմոնի հռչակավոր պալատը կառուցված էին այդ ծառերի փայտից: III հազարամյակում (ն.Ք.) տեղի էր ունենում մայրի ծառերի աշխույժ առևտուր: Եգիպտացիները դրանք օգտագործում էին կառուցման նպատակով, իսկ խեժը՝ մումիֆիկացման ժամանակ: Մայրուտների գերօգտագործումը դարեր է շարունակվել, որի հետևանքով ներկայումս այդ անտառներից ընդամենը 4 փոքր հատված է պահպանվել:
2500-900թթ. (ն.Ք.)	Մայա կայսրություն	Բնակիչները վարում էին ինտենսիվ գյուղատնտեսություն. տարածքը ազատում ջունգլիներից, կառուցում դարվատներ, ճահիճները չորացնում առուների միջոցով և առուներից հանած հողը օգտագործում արհեստական դաշտեր ստեղծելու համար: Ձևավորված համակարգը չափից շատ էր կախված հնարավոր պատահարներից: Ի վերջո զարգացավ հողերի էրոզիան, իսկ գետերի ջրերը քայքայեցին արհեստական դաշտերը: Գյուղատնտեսության կտրուկ անկումը սկիզբ դրեց նաև այդ քաղաքակրթության անկմանը:
50թ. (ն.Ք.) 450թ.	Հռոմեական կայսրություն	Հռոմի աճող բնակչությունը և հսկա բանակը սնունդ էին պահանջում: Հյուսիսային Աֆրիկայի գավառների երբեմնի բերրի դաշտերը գերօգտագործման հետևանքով ենթարկվեցին անապատացման: Իսկ շրջակա անտառների վերացման պատճառով ջրազրկված ոռոգման համակարգը անկարող էր այլևս շտկել իրավիճակը: